ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար համազգեստի ձեռքբերման
նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/23» ծածկագրով
գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «10» մայիսի 2022թ.
Ժամը՝ 17:15

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Հարություն Դավթյան՝ Դատական կարգադրիչների ծառայության պետի առաջին տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

Արթուր Հարությունյան՝ Դատական կարգադրիչների ծառայության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

Լևոն Դավթյան՝ Դատական կարգադրիչների ծառայության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Կենտրոն բաժնի պետ

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Բացակայում էր՝

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/23» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 8-րդ օրվա (05.05.2022թ.)՝ ժամը 11:00-ն,
- հայտը բացվել է էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 06.05.2022թ.՝ ժամը 11:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/
1	Համազգեստ	49083930

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	ք. Երևան, Զ.Սարկավագի 157

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/23» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ	Գին (ՀՀ դրամ)	Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ	Գին (ՀՀ դրամ)	
1	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	40902750	20%	49083300	40493250	20%	48591900	

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 06.05.2022թ.՝ ժամը 11:30-ին և Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

7. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2022թ. մայիսի 11-ին՝ ժամը 15:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

_____ Հարություն Դավթյան

_____ Արթուր Հարությունյան

_____ Լևոն Դավթյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան